





Բ. Անթիւ հարուածք բարբարոսական թշնամեաց շուրջ զմեօք (259—280):

Գ. Նշանք մեծամեծք եւ զարմանալիք (280—285):

Սկզբնազիրը չունէր գլուխներու բաժանում. բայց կար հոն հաւանորէն հատուածներու բաժանում:

Այժմեան օրինակը, որ գետեղում է Աղուանից Պատմութեան մէջ, բաժնուած է 8 գլուխներու ուրոյն խոստարանութիւններով (Բ. 9—16): Ասոնք Խմբագրէն են, անինամ լեզուով, անքերական շարադասութեամբ: Ժ. գլուխը կը կրէ խոստարանութիւնս. «Յաղագս տանեալութիւն նահանջն սկիզբն պատմագրարար որ եղեւ»: Հոս «ԺԸ. նահանջն սկիզբն» առնուած է Թ. գլխի վերջին պարբերութեանէն. «սկսայց յառաջին ԺԸ. նահանջն: Իսկ «որ եղեւ» անխմաստ է. սկզբնագրին մէջ էր անտարակոյս բնագրին մասը, զոր ուղղելով կը կարգամ. «Եւ եղի իրբեւ լցաւ ժամանակն»: ԺԱ. գլխի խոստարանութիւնը «վասն գումարելոյ Խոսրովու ընդ արքային Յունաց եւ յաղթահարելոյ զնա ամս բազումս սրով եւ գերութեամբ աշխարհին Հռովմայեցոց», կը պատշաճէր Ժ. գլխին: Այսպէս նաեւ ԺԵ. գլխինը. «վասն սաստկացեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն ի միասին» պէտք է ուղղել «եւ մահուն». առնուած է բնագրէն. «Սոփը, սուրն եւ մահն գործակից նոցա»:

Վերոյ իր Պատմութիւնը դասաւորած է ժամանակագրորէն, երակէտ ընարելով ԺԸ. նահանջը.

«Սկսայց յառաջին <ամէն> ԺԸ. նահանջին (Չ. նահանջէն), ի Յայտնութեանէն (Չ. յարութեան) տեսն մերոյ Յիսուսի Քրիստոսի, <որ օր ԺԸ. է> մեհեկանի ամսոյ, յԼԵ. ամէն Խոսրովու Որմզդեան արքայից արքայի»:

Վերոյ նկատի առած է հոս 532 գատկացոյց բոլորակի (cyclus) նահանջները, որոնք չորս տարի անգամ մը կը փոփոխուին: Այս բոլորակը կը սկսի 552 յուլիս 11ին: ԺԸ. նահանջին առաջին տարին է 624, յուլիս 23. այս տարւոյն Յայտնութեան տօնը կ'իյնայ յուլեան տոմարի 625 յունուար 6ին, որ է Ուշագրութեան արժանի է, որ Վերոյ եկեղեցական տարւոյ նահանջները իրբեւ թուական կը կիրարկէ, նմանութեամբ Ողոմպեա-

կանին, ԺԸ. նահանջ, առաջին տարի: Իրեն անձանօթ է տակաւին Հայոց թուականը, որ իր սկիզբն ունի 552 տարին, նոյն 532 բոլորակի առաջին տարին. այլապէս պիտի ըսէր «ի թուին Հայոց ՀԲ»: Միաժամանակ ուզած է Վերոյ յուլեան 625 տարին երակէտ առնել, որ յունուար 1ով կը սկսի:

Բնագիրը հարագատ չէ պահուած. երբ կը շեշտուի ԺԸ. նահանջին առաջին տարին, կը պահանջուի որ նահանջ սեռական եւ ոչ բացառական ըլլայ: Չեռագիրը փոխանակ Յայտնութեան ունի Յարութեան. բայց երբ մեհեկանի ամիսը կը յիշէ, հարկադրուած ենք Յայտնութիւնը իմանալ: Ամսոյն օրը «ԺԸ» դուրս ինկած է հաւանորէն «ԺԸ. նահանջի» ազդեցութեան տակ: 625ին յունուար 6 կը համապատասխանէ մարերի ԺԸ. ին: Խոսրով Բ. գահ բարձրացաւ 590 ամառը. ուստի ԼԵ. տարին է 624/5:

Պատմութեան բովանդակութիւնն է. ԼԵ. ամ Խոսրովու (624/5). Ա. Արշաւանք Հերակղի, էջ 232—238:

ԼԶ. ամ Խոսրովու (625/6). Զինակցութիւն Հերակղի Հիւսիսական ազգերու հետ եւ Բ. Արշաւանք Հերակղի, էջ 248—249, 28:

ԼԷ. ամ Խոսրովու (626/7) Ա. Արշաւանք Թուրքաց, էջ 239—257 թղթերու ետեւառաջութիւն կայ. տես վարը:

ԼԸ. ամ Խոսրովու (627/8). Գ. Արշաւանք Հերակղի, Բ. Արշաւանք Թուրքաց:

Ա. ամ Արտաշրի. 628/9 Գ. արշաւանք Թուրքաց:

Բ. ամ Արտաշրի 629/30 Ե. արշաւանք Թուրքաց:

ՅՏԵՆԱՌԱՋՈՒԹԻՒՆՔ

Չարմանալի է, որ ոչ էմին, ոչ Շահնազարեան, ոչ Պատկանեան եւ ոչ ալ Ն. Աղոնց (Անահիտ, 1939, Թ. 3—4, էջ 25—26) անդրադարձած են թղթերու այս ետեւառաջութիւններուն, որոնք վաղ ժամանակ պէտք է տեղի ունեցած ըլլան: Եթէ ընթերցողները ժամանակագրութեան ուշագիր եղած ըլլային, գիւրդին պիտի ըլլար զգալ այս խանդարումները:

էջ 239, տ. 8—251, 25 (ըստ Շահնազարեանի հրատարակութեան) պէտք է վերադասել այսպէս.

1. էջ 238, տ. 22 (ի նմանէն) կը շարունակուի էջ 248 1 (այսպէս այնուհետեւ) մինչեւ

2 Հմմտ. Անանիա Շիրակացի, Մատենագրութիւնք, էջ 265:

251, տ. 25 (կործին Հռովմայեցոց [տուրկանն դարձաւ յաշխարհ իւր]: Կը շարունակուի

2. էջ 239, տ. 4 [սաստիկ — գնացեալ ասեն եթէ դուք] ոյր հրամանաւ եկիք) մինչեւ 240, տ. 12 (այդմիկ) . կը շարունակուի՝

3. էջ 244, 6 (եւ յետ այսր) — 247, 15 (գնացին): Կը շարունակուի՝

4. էջ 240 12 (եւ այսպէս) — 244, 5 (ի նոյն իշխանութիւն) . կը շարունակուի էջ 251, 26 («իսկ կայսրն հիւսիսոյ, իմացիր Հոռոմոց Հերակղ»):

Տեղափոխութիւն կրած են 14 թուղթեր. մէն մի թուղթ ըստ Շահնազարեանի տպագրին 26 տող կը բովանդակէր. այսպէս

239, 8—240, 12 1 թուղթ.

244, 6—247, 15 6 թուղթ.

240, 12—244, 5 7 թուղթ.

284, 17 (գօրաց) կը շարունակուի՝

էջ 285, 6 (այլ մեք) . — 22 (անգլաւեցայ) .

284, 18 (անգէն) . — 285, 7 (նման) :

Այս ետեւառաջութեան պատճառաւ հարկ տեսած է խմբագիրը մանր յաւելումներ մուծել բնագրին մէջ կապակցելու համար անկապ նախադասութիւնները: Այսպիսի նորամուտ տողեր են հետեւեալները.

ա. էջ 239, տ. 1—5. [«Սաստիկ ամբոխիւ ելին Խաղիբք ասպատակել յաշխարհս մեր հրամանաւ Հերակղիսի. եւ պատգամարք առ նոսա Խոսրովու Պարսից արքայի (գնացեալ ասեն), եթէ դուք»] ո՞ր հրամանաւ եկիք»:

Փակագծի մէջ առնուածը, «գնացեալ ասեն» Շահնազարեանի յաւելումն է, քանակուսի փակագծի մէջ գետեղուածը խմբագրին ձեռքէն: Անտեղի են յաւելումներս, վասն զի «ոյր հրամանաւ» շարունակութիւնն վասն զի «ոյր հրամանաւ» իմ ծառաս է, որուն («ոյր») հրամանով եկիք իմ ծառաս է, որուն («ոյր») հրամանով եկիք յաշխարհս իմ»: Ուստի հարցական դերանուն չէ «ոյրը»: Յաւելումս մէջ Հիւսիսականք «Խաղիբք» կ'անուանուին. ասոնք կը սականք «Խաղիբք» կ'անուանուին. ասոնք կը յիշուին Աղուանից Պատմութեան մէջ նաեւ այլուր (Բ. 1, 4, 17. Գ. 4 եւ այլն): Բայց ծանօթ է, որ Խաղիբ ժողովուրդը պատմութեան մէջ առաջին անգամ 685ին երեւան եկան: Ուստի խմբագիրը այս թուականէն ետքը պէտք է մուծած ըլլայ «Խաղիբ» յի-

շատակութիւնը Աղուանից Պատմութեան եւ Վերոյ այս Պատմութեան մէջ: Ուշագրութեան արժանի է, որ Վերոյ երբ «բարբարոս ազգերու» կամ «հիւսիսականաց» արշաւանքները կը յիշէ, անոնց ցեղական զանազանութիւնը չի գիտեր յանուանէ: Սերիոս այս հիւսիսականները կ'անուանէ «Թեոսարցիք», որոնց հետ նոյն կը համարի Մագգութիւնը, Հեփթաղները, Թուրքերը եւ առ հասարակ ընդհանրութեամբ: Այսպէս նաեւ Բիւզանդալեոնականները, որոնք «թուրք» անուանուած պատմագիրները, որոնք «թուրք» անուանով կը ճանչնան, վասն զի Խաղիբ կամ Խաղիբք ենթակայ էին Թուրքերու Խաղիբին, եւ տակաւին իրբեւ անկախ, իշխող ժողովուրդ պատմութեան բեմի վրայ չէին երեւցած:

Բ. Նման յաւելում մըն է նաեւ էջ 251, տ. 24—25 «տուրկանն դարձաւ յաշխարհ իւր», որուն իմաստը հակառակ չէ ինձ:

Գ. էջ 247, 14—15. «եւ դարձուցեալ գերեսս իւրեանց՝ նովին սպառնալեօքն զնացին» . որ կրկնութիւն է էջ 240, 12—12ի:

Դ. Յաւելում կ'երեւայ նաեւ տեղիքս. «Քանզի բառնալոց էր թագաւորութիւնն ի տանէ Մասանականացն եւ տալոց էր ի ձեռս որդւոց իմայէլի» (Բ. 14): Վերոյ վախճանած է 630/31ին. հոս կը շօշափուին դէպքեր, որոնք տեղի ունեցած են 642—651 տարիներուն: Մասանեան վերջին թագաւորն էր էր Յագիկերտ Գ. 632—642, † 651/2:

Ե. Բ. 10 խօսելով Խոսրով Բ.ի մասին կը գրէ. «Այլ առաւել եւս ոգորէր ընդ ծով եւ ընդ ցամաք եւ զգեղեցկաչն քաղաքս եւ ընդ ցամաք բնակչօքն իւրովք հանդերձ Հռովմայեցոց բնակչօքն իւրովք վասն խաղացուցանէր ի կողմանս Պարսից վասն տենչանաց իւրոց: Նմանապէս եւ գնարտարս ի նոյն ձեռ օրինակի նստուցանէր եւ անուախի գումն առաւել քան զԱնտիոք քաղաք. եւ ներ գումն առաւել քան զԱնտիոք քաղաք. եւ զայլս յիւր անուն գառաւելն ի վերայ յաւելեալ» (էջ 146—147 Ղուկ.):

Ընդգծուած պարբերութիւնս նախորդին հետ սերտիւ կապուած չէ. բնագրին ալ անաղարտ չէ պահուած: Նոր-Անտիոքը կանուցած է Խոսրով Ա. Անուշըրուան, Անտիոքի բնակիչներու եւ արուեստագործ շիւթիւններու փոխադրութեամբ (540ին): Սերիոս կը գրէ. «Ան մարտիւ զԱնտիոք [Պիսիդացւոց] եւ գերեալ նստոյց առ թագաւորական կայանին՝ շինեալ քաղաք եւ անուանեալ զնա վեհ Անջատոք Խոսրով. զոր ա-







Արանայ երկիրը, որ Բարսալիա կը կոչուի. անոր քաղաքները շինուած էին Հոռոմներէն, որոնք Կասպիա են, զորոնք Դուռն թուրքաց (Toraje) կ'անուանեն (Իմացիր ձորայ): Անոնց բնակիչներն էին Բուրգարք եւ Պուզուրք. որոնք ժամանակ մը քրիստոնէայ էին. բայց որովհետեւ օտար ժողովուրդ մը այն կողմերու իշխանութիւնը ձեռք առած էր, կոչուեցան անոնք Պազարք երէց եղբոր անունով, որ Պազարիկ կ'անուանուէր: Այս ժողովուրդը հօր էր եւ ընդարձակուեցաւ» Chronique de Michel le Syrien, Paris 1901, հատոր Բ., էջ 364. հմմտ. նաեւ Marquart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, էջ 485—491: Նոյն հատուածը փոխ առած է նաեւ Բարհերէոս իր Ասորական Ժամանակագրութեան մէջ<sup>8</sup>:

Աս հասարակ կը կարծուէր թէ Միք. Ասորի այս տեղիքը առած է Յովհ. Եփեսացուի Եկեղ. Պատմութեանէն (Marquart, անդ, 56). բայց երբ հրատարակ ելու ասորի բնագիրը, տեսնուեցաւ որ Միքայէլի յաւելուածն է այն, զետեղած Եփեսացիէն առնուած քաղուածքներու վերջը (անդ, էջ 486):

Գ. Թէոփանէս Պոստովանող, իր Ժամանակագրութեան մէջ, կը գրէ թէ Հերակղ հրաւիրեց տօս Կօրքոս էք տիչ էաս, օնս Կասարէս օնօմաչօսսն ի նիգակակցութիւն, օ Լաօս տօն Կօրքոս քիչ յետոյ ալ կը յիշէ (Chronogr. էջ 315—316):

Այս տեղիքները այց կու տան, որ Պազարք կամ Պազիրք իրրեւ ցեղանուն իշխող ժողովուրդի մը՝ 685էն յառաջ ծանօթ չէին ոչ Հայոց, ոչ Յունաց եւ ոչ ալ Ասորաց:

Թէոփանէս, որ յորինած է իր Ժամանակագրութիւնը Թ. դարու առաջին տասնակին, երբ Թուրքերը «Պազարք կը կոչուին» կ'ըսէ, կ'արտայայտուի Թ. դարու ըմբռնումով, այսինքն Հիւսիսային Թուրք անուանուած ժողովուրդը է. դարու երկրորդ կէսին հրատարակ եկան Պազարք անունով: Նոյնպէս Միքայէլ Ասորի, որ վախճանած է 1199ին, ունեցած է ձեռքի տակ ոչ թէ Յովհ. Եփեսացուի Եկեղ. Պատմութիւնը, այլ անհաւաստի աղբիւր մը, որ ծանրակշռութիւն չի կրնար ներկայացնել առ ինչդիրն:

Հաւանօրէն 640էն ետքը, երբ Հիւսիսի

Թագաւորութիւնը մեծ յեղաշրջութիւն կրած էր, պետութեան սանձը անցաւ Պազար ցեղին:

Ուստի ժամանակացոյց կարող է ծառայել մեր ձեռքը Պազիր կամ Պազար անունը՝ ճշգրտելու համար ժամանակն որ եւ է գրութեան, որ կը յիշատակէ այս յորջորջումը: Այսպէս Մովսէս Պորենացուի Հայոց Պատմութիւնը, Աշխարհացոյցը եւ Աղուանից Պատմութիւնը չեն կրնար 650էն յառաջ գրուած ըլլալ:

4. Ա. Արշաւանի Զարու հախանի (628): — Հերակղ եւ Ջերու Ժամագրուած էին հանդիպելու իրարու Տիգրիսի առաջ: «Յամին ԼԸ (627/8 ձմեռը), որ ամ էր տազնապի պետից սպանմանն Պոսրովու, եկեալ նոյն ինքն Ջերու Պաքան, ունելով ընդ իւր եւ գորդին իւր. եւ զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով»: Ան անցաւ ձորայ դուռէն, մտաւ Աղուանից աշխարհը. յառաջացաւ դէպի Տիգրիս: Հասաւ հոն նաեւ Կայսրը իր բանակով, «առ նիգակակից օգնականն իւր»: Պաքանն եւ Կայսրը «յոյժ բերկրեցան ի տեսանել զմիմեանս»: Պոսրով իմացած էր, որ երկու պետեր ժամագրուած են Տիգրիսի առաջ. եւ աճապարած էր քաղաքին պաշարումէն յառաջ հասցնել հոն օգնական զօրք, զօրավար Շահարաղականի<sup>9</sup> առաջնորդութեամբ:

Պաշարումը երկարեցաւ: Տիգրիսեցիք կը գիմարէին քաջարար: Տեղի ունեցաւ խորհրդակցութիւն: Կայսրը խորհուրդ տուաւ Պաքանին, որ վերադառնայ իր աշխարհը, սրովհետեւ իր բանակը պիտի չկարենայ սովալ ամառուան օթիին, մանաւանդ երբ ռազմադաշտը փոխադրուի Տիւրոնի առաջ: Որոշուեցաւ լքել պաշարումը, յաջորդ տարուան թողլով քաղաքին նուաճումը: Պաշարեալները երբ իմացան թշնամուցն մտադրութիւնը՝ անխտհեմութիւնը զործեցին նախատելու Պաքանը. որ հեռացաւ զայրութիւնով եւ վրէժխնդրական ոգևով (157—159):

5. Բ. արշաւանի հախանի: Յաջորդ տարին (628/29 ձմեռ) շարժեց Ջերու Պաքան իր բանակը միւսանգամ. խաղաց դէպուղի Տիգրիսի վրայ, զոր պաշարեց: Բերդաքաղաքը չունէր այս անգամ պարսկական ըն-

<sup>9</sup> Անուանաւ եւ անձինս մասին տես C. J. Dowsett, The name and the role of Տաօռօպլապս or Տահրապլան: Byzantion 21 (1951), 311—321 եւ F. Justi, Iranisches Namenbuch, Marburg 1895, S. 287.

<sup>8</sup> Bar-Hebraei chronicon syriacum, Ա.—Բ., Լայպցիգ 1789. հրատ. P. J. Bruns եւ G. G. Kirsch, S. 95.

արանի զօրքը: Հաղիւ երկու ամիս կրցաւ գիմակալել: Մտաւ բարբարոս բանակը քաղաքը եւ դատեց չարաչար. կոտորեց իշխաններն եւ բերդականները, բնաջնջեց քաղաքացիները, աւարեց անյաօրէն: «Հրամայեաց (Պաքանն) բառնալ անտի զաւարն ամենայն. ինքն չուեալ հանդերձ զանձիւքն դառնայ ի տեղի իւր» (172—174):

6. Շաք որդին հախանի Աղուանից աշխարհի մէջ: Ջերու Պաքան այս տարի ալ հետը առած էր իր Շաթ որդին: Վերադարձի ժամանակ կը յանձնէ պատերազմիկ զօրքը «ի ձեռս որդւոյն իւրոյ Շաթայ հանդերձ զաստիարակօք արամբ քաջօք՝ երթալ հրամայէր ի սահմանս Աղուանից»: Յանձնարարած էր իրենց, որ «եթէ ելցեն մեծամեծք եւ առաջնորդք աշխարհին ընդ առաջ որդւոյն իմոյ եւ տացեն ի ձեռս զաշխարհն իւրեանց ինձ ի ծառայութիւն... թողացուցէք եւ դուք նոցա կեալ եւ ծառայել ինձ». այլապէս «մի խնայեցէք ալիս ձեր ի նոսա»:

Շաթ հրամանիս համաձայն ուղարկեց պատգամաւորներ Պարտաւի պարսիկ մարգպանին եւ Աղուանից Վերոյ կաթողիկոսին, ինքնակամ անձնատուր ըլլալ եւ ինայել աւրինհեղութիւնը. այլապէս որոշած է ինքը սիկ մարգպանը մերժեց անձնատուութիւնը, բայց ինքը գիշերախառն դիմեց փախուստի: Կաթողիկոսը, որ նոր էր վերադարձած 25ամեայ բանտարկութենէն, չուզեց պատասխանատուութիւնը յանձն առնել եւ մտնել աշխարհը Շաթին: Ուղարկեց սուրհանդակ մը Պարսից Դուռը, հարցնելու թագաւորին զորքերը: Արտաշիւր էր գահին վրայ, Տիգրիսի քաղաքային կռիւներու մէջ: Մինչ այս բոն քաղաքային կռիւներու Աղուանից աշխարհ. ժողովուրդը առանց գիմարութեան կը դիմէ խուճապով փախուստի: Այս շփոթի մէջ կը հարկադրուի կաթողիկոսը ներկայանալ Շաթի ճամբարը, ուր կ'ընդունուի սիրով: Արձակեցանակ բանակը կը գապուի գերիները կը վերադարձուին: 629 տարւոյն կ'իշխեն երկրին մէջ սով եւ համաճարակ հիւանդութիւններ:

Աղուանից աշխարհը նուաճուած էր: «Յերկրորդ ամի Արտաշիւր որդւոյ Կաւատայ Պարսից արքայի, մինչ գեռ եւս առնէր նա գիշխանութիւնն ըստ կամս իւր», ուստի 629 տարուան ըստ կամս իւր», ուստի 629 տարուան ըստ կամս իւր», ուստի 629 տարուան ըստ կամս իւր», ուստի 629 տարուան ըստ կամս իւր» (190—191): 630 ապրիլին յառաջ:

Երանայր բռնութեամբ յամենայն հրամանս իւր». պահանջեց ժողովուրդէն հարկ, «գրիտարաքմայն ըստ սովորութեան աշխարհազրի Պարսից թագաւորութեանն», որ ծանր էր կողպտուած ժողովուրդին համար:

7. Շաք կ'արշաւէ Հայաստան եւ վրաստան նուաճելու համար: Շաթ «եղ ի մտի իւրում ի ժամանակս ամառնային (ուստի իւրում ի ժամանակս ամառնային) Հայոց 630 յունիս-յուլիս) վազել յաշխարհն Հայոց եւ զնոսա եւս սահմանակցօքն նորա ածել ի հնազանդութիւն իւր», անշուշտ 602ի սահմանին մէջ: Կը կազմէ բանակ մը 3000 զօրքով եւ կը կարգէ «իշխան նոցա զՉորպան քով եւ կը կարգէ «իշխան նոցա զՉորպան քով թարխանն... առաքէր զնա յառաջագոյն քան զինքն, զի պատրաստեցէ առաջի նորա աւրինքն, զի պատրաստեցէ առաջի նորա աներկիւղ զճանապարհս նորա եւ զննեցէ զարտագեալ զօրավարին Պարսից, վասն հպարտացեալ զօրավարին Պարսից, որ դեռ եւս ունէր զաշխարհն Պարսից, որ դեռ եւս ունէր զաշխարհն Պարսից, որ դեռ եւս ունէր զաշխարհն Պարսից» (190—191): 630 ապրիլին յառաջ:

Պօքը Շահ-Վարազի (Պորեանի) մասին է. սա 629 յուլիսին յԱրարիտոս հանդիպում մ'ունեցած էր Հերակղի հետ. եւ պայմանաւորուած, որ ան քաջ պարսիկ զօրքը հոռուութեամբ սահմաններէն եւ վերադառնայ մէկական սահմաններէն եւ կնքէ խաղաղութեան Տիւրոն, թագաւորէ եւ կնքէ խաղաղութեան զաշխարհը<sup>10</sup>:

Չորպան թարխան միջամուխ կ'ըլլայ Հայաստան. կը լսէ հոն Շահ-Վարազի յառաջախաղացութիւնը. կը սպասէ անոր դաւաճանակալ: Շահ-Վարազ, «որ հրատարակախօս լինէր ի մէջ զօրաց իւրոց եւ կարծիս տայր կտրել զչաւիղս Սասանականին եւ զիւր թագաւարներն», կ'ուղարկէ թշնամուցն վրայ Հոնահը, որ «իշխանն էր գնդին Տաճկահոնահը», զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց». զօրաց թիւն էր 10.000. իսկ ինքը կը ձիոց»:

8. Կոտորած Շաթի բանակին մէջ. Ջերու հախանի մահը. վերադարձ: Շաթի չուն գանդազագնաց մտած էր «ի կիրճս ճանապարհաց երկր աշխարհաց՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից», երբ հապճեպ «հասանէր բոթ ահագին ի հիւսիսական սոչորիչ ծովէն, որ

<sup>10</sup> Nöldeke, Tabari, S. 302, 387.

է նա ինքն Ձերու Խաբան, առ գիշարանձ Կո-  
րին իւր Շաթ, թէ 'Հասին ի վերայ իմ հէնք  
եւ ոչ յաւելուս տեսանել զերեսս իմ. եւ փո-  
խանակ զի ոչ կացի ես յախատանի, այլ  
ձգտեցայ յանպատշաճ թաղաւորութիւն, որ  
ոչ էր ինձ անկ, վասն այն յամբարտաւանիւն  
իմում եւ յայսմ բարձրութենէ անկայ: Եւ  
արդ զու մի յապաղեր սատակել զազգսդ որ  
ընդ քեզ են. եւ ջանա ապրիլ ի ձեռաց զոցա,  
զի մի ի յառաջագոյն լսել զոցա զեղեակքս՝  
վաղվաղեացեն պատառել զքեզ. այլ ես կո-  
րեայ եւ անզաւակեցայ» (194—195):

Այս պատգամը ստանալուն պէս «անդէն  
զարձոյց զերեսս իւր կաթսայն հիւսիսոյ  
(Շաթ) յետ ընդդէմ որդուցն իւրոց. սկսաւ  
ողորել իւրովք ընդ ինքն, ցանել զեռանդն  
բարկութեան իւրոյ ի վերայ կորեանց իւրոց  
եւ տուժիլ ընդ միոյ զհազարս եւ ընդ երկուց  
զբիւրս» (193—194):

Այս կապակցութեամբ հարկ է Բ. 16  
գլխին վերջին երկու էջերու մէջ թղթերու  
ետեւառաջութիւն ենթադրել, ինչպէս վերա-  
գոյն յիշեցի, էջ 284, 17 (գորաց) իւր շարու-  
նակութիւնն ունի էջ 285, 6 (այլ մեք) —  
22 (անզաւակեցայ) տողերը. որ կը շարունա-  
կուի իւր կարգին էջ 284, տ. 18 (անդէն) —  
285, տ. 7 (նման):

Շաթ պատերազմիկ գորքը յանձնած էր  
Չորպան Թարխանի: Այդ գորքը կազմուած  
էր զանազան ցեղերէ: Իր շուրջը ունէր Շաթ  
արքունական ոստանիկ թիկնապահներն եւ  
հաւատարիմները: Գիտցաւ ան անշուշտ բո-  
ւստին լըջութիւնը եւ անոր համաձայն դա-  
սաւորեց իւր հաւատարիմները. այս ինքն  
կիրճին մուտքն եւ ելքը փակելով յարձակե-  
ցաւ այրացիկ եւ վտանգաւոր զօրքին վրայ եւ  
կոտորեց սակաւ կորուստով: Այս պատա-  
հած ըլլալու է մայիս-յունիսին: Իր վերա-  
դարձը սակաւաթիւ մնացորդներով պէտք է  
եղած ըլլայ նոյն տարւոյ յունիսին:

Ձերու Խաբանի մահուան մասին տեղե-  
կութիւններ կը հաղորդէ Հօէի-Լի Հիուեն-  
ցանգի վարքին մէջ, որ հասած է մեզի Սի-  
ի-բի խմբագրութեամբ 648ին: Այս ճանա-  
պարհորդը հանդիպած է Խաբանին 630 մար-  
տին, անոր մայրաքաղաքին մէջ, որ է Հփօ,  
ապա կոչուած Գունդուզ: Խաբանը քիչ յե-  
տոյ արշաւանք մը կը կատարէ զէպի Բահլ.  
կը գրաւէ մենաստան մը, որուն թանկագին  
իրերը աւարել կ'ուզէ: Նոյն գիշերը երազի

մէջ կը տեսնէ Պի-շա-մէն աստուածը, որ  
կ'ըլտէ. Ո՞ր ոյժի վրայ վստահացած կը յան-  
դգինիս կործանել այս մենաստանը. եւ կը  
միտէ նիզակը անոր փորն եւ կողը թափան-  
ցանց: Խաբանը ընդոստ կ'արթննայ քունէն,  
կը զգայ հարուածին պատճառած ցաւը. կը  
պատմէ եւ կը խնդրէ կանչել կրօնաւորները.  
բայց ան անոնց զալէն յառաջ կը փչէ հո-  
գին<sup>11</sup>:

Թէ այդ մահաբեր հարուածը Ձերու Խա-  
բան երազի՞ մէջ, թէ պատերազմի դաշտի  
վրայ ընդունած է, կը մնայ խնդրական. յա-  
մենայն դէպս այն ստրջանքը, զոր յայտնած  
է մահէն յառաջ շատ համաձայն կը հնչէ այն  
մահասարսուտ բոթին, որ լսուած է «ի կիրճս  
ճանապարհաց երկից աշխարհացն», զոր յի-  
շեցինք: Ձերու Խաբանի խոստովանութիւնը,  
թէ «Հասին ի վերայ իմ հէնք... զի ոչ կացի  
ես յախատանի, այլ ձգտեցայ յանպատշաճ  
թաղաւորութիւն» կը հաստատեն չին աղ-  
բիւրներ, որոնց համաձայն մանր թագաւոր-  
ներ կամ իշխաններ խնդրած են Ձիներու օգ-  
նութիւնը ընդդէմ Թիւնդ-չէ-հուի<sup>12</sup>, որ օր  
աւուր կը ձգտէր նոր նուաճումներու:

Խաբանի որդին Շաթ դարձաւ անշուշտ  
իւր սակաւաթիւ տոհմակիցներով հայրենի  
տունը եւ գրաւեց իշխանութիւնը: Ինքն է  
անտարակոյս այն Սէ-չէ-հու Խաբանը, որ  
633ին, ըստ չին աղբիւրին, շարժեց բանակը  
Սողդիանէի վրայ, թերեւս իւր հօրը արեան  
վրէժը լուծելու համար, բայց տուժեց, ինքն  
ալ, իւր կեանքը:

Այսպէս միայն կարելի է հաշտեցնել  
հայկական եւ չինական աղբիւրներու իրարմէ  
խոտորոզ տեղեկութիւնները<sup>13</sup>:

Զ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

<sup>11</sup> Ed. Chavannes; Journal Asiatique, serie 9, t. 18 (1901), 553—555.  
<sup>12</sup> Deguignes, Geschichte der Hunnen und Türken, übersetzt von Dühert, I, 597. Marquart, WZKM, 12, S. 192.  
<sup>13</sup> J. Marquart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, S. 498.

**ՈՄԵՏՈՒՆԵՑՑ ՆԵԹԵՐՈՐՈՒԹԻՒՆԸ**

ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐՈՒ ՅԱԳՈՒՄԸ

Մովսէս Խորենացի Ամատունիներու նա-  
խարարութիւնը Վաղարշակ Արշակունի թա-  
գաւորէն եւ անոր ժամանակը հաստատուած  
շաւանդեր, այլ շատ ուշ շրջանի մէջ եւ այն՝  
Արտաշէս Բ. թագաւորէն: Կը գրէ՝ «Յաւուրս  
սորա ասէն եկեալ զազգս Ամատունեաց ի  
կողմանցն արեւելից Արեաց աշարհին: Բայց  
են սոքա բնութեամբ Հրեայ ի Մանուէայ ու-  
մեմնէ, որոյ որդի իւր մեծահասակ եւ ուժեղ  
Սամսոն անուն կոչեցեալ, որպէս սովորու-  
թիւն է Հրէից ըստ յուսոյ զնախնեացն կոչել  
զանուանս: Բայց է ճշմարիտ եւ այժմ իսկ  
անձնեայք եւ բարեձեւք ըստ պատշաճի վայել  
են ամենայն իրօք եւ ուժեղք: Տարեալք են  
սոքա ի յԱրշակայ առաջին ի Պարթեւաց թա-  
գաւորեցելոյն եւ յառաջադիմութեամբ ան-  
դրէն յԱրեաց աշխարհին ի պատիւ հասեալք  
ի կողմանս Ահմատանի: Բայց թէ յի՞նչ  
պատճառաց զայլուստ նոցա այսր ոչ գիտեմ,  
այլ պատուին յԱրտաշիսէ գեղիւք եւ դաս-  
տակերտօք: Եւ անուանին Ամատունիք, որ-  
պէս թէ եկը<sup>1</sup>: Եւ կէսք ի Պարսից Մա-  
նուէանս զնոսա կոչեն յանուն նախնոցն»  
(Պատմ. Հայոց, վեներտիկ 1881, էջ 288—  
289):

Չարմանալի է որ Խորենացին ԱՀՄԱ-  
ՏԱՆԻ նմանութենէն չէ ստուգարանած, որ  
Հ. Ինճիճեանի համաձայն հնարաւոր է (Հնա-  
խօսութիւն, Բ., էջ 164, ծն. 1): Եւ կամ  
նոյն իսկ չի բղխեցնել ՄԱՆՈՒՆԻ<sup>2</sup>:

Ղափանցեան կը գրէ՝ «Ոտից Խորենա-  
ցին կազմում է Խորխոռունի նախարարու-  
թիւնը, այսինքն պիտի ընդունենք որ այդ  
ազգեցիկ Ֆէոդոլական իշխանութիւնը խու-  
րիական ծագում ունի, ինչպէս Մանդակու-  
նիները Manda ցեղից, Սլիւնիները Sale ցե-  
ղից (Salak եւ Malak անունները), Ամատու-  
նից»

<sup>1</sup> Թովմաս Արծրունի կը գրէ՝ իսկ զանուն քա-  
ղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգա-  
բանի Արտաշէսի ձեռակերտ կամ թէ Արտաշէսի եկը,  
զի ըստ պարսիկ ձայնի Մատ եկը թարգմանի (Պատմ.  
Արծրունեաց, Կ. Պ. 1852, էջ 57):  
<sup>2</sup> Հ. Բարսեղ Սարգիսեան շատ լաւ ուշադիր  
եղած է որ Մովսէս Խորենացիի «հնարադիմութիւնն» է  
Ամատունիներու հրէական ծագումը: Ան կը միտի ըն-  
դունելու թէ «ի ժամանակի Տիգրանայ հանդիպեցաւ  
նոցա մուտքն ի Հայս...» (Ազգաթանգեղոս եւ իւր բազ-  
մազարեան գաղտնիքը, վեներտիկ 1890, էջ 89):

նիները Mada (Մեդացի) ցեղից եւ այլն:  
Հայոց Խոռ արտասանութիւնը ցոյց է տալիս  
որ Խորերի անունը հնչւել է Խոռ(ու)օ ձայ-  
նաւորով, ունենք նաեւ Խոռ բառը ժլատ  
իմաստով, որը նոյնպէս այդ ցեղի անունից  
է մնացել, թերեւս որպէս յատկանիշ դրանց  
առեւտրական լինելու համար (Պատմութիւն  
Ուրարտուի, Երևան 1940, էջ 34—35, ուր  
եւ հմմտ. Ռշտունիներու ծագումը, էջ 226):

Ամատունիները կրնան ուրարտական սե-  
րունդէ ըլլալ (հմմտ. իմ «Գնունեաց եւ  
Ռշտունեաց նախարարութիւնները, Վիեննա  
1952, էջ 4 եւ 58): Բամաջեան Ամատունի  
կը նոյնացնէ Ամադանի հետ (Իսկական Պատմ.  
Հայոց, էջ 56. հմմտ. Բանասէր, Գ. հոր.,  
էջ 193, 239, 314):

ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐՈՒ ԲԱՐՁՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԸ

«Ամատունեաց տոհմը Հայ նախարարա-  
կան տների մէջ առաջիններից մէկն էր, գոնէ  
Գ. եւ Ն. դարերում» (Յովսէփեան Գար.  
Գ. եւ Ն. դարերում) Եւ ուսումնասիրութիւններ  
արքեպ. Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ  
հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան,  
Պրակ Գ., Նիւ Եորք 1944, էջ 25—26):

Գահնամակի մէջ եօթանասուն նախա-  
րարութիւններու վրայ ժե. բարձր կամ աս-  
տիճանը Ամատունեաց նշանակուած է, իսկ  
ներսէս Պարթեւի վարքի մէջ տրուած նա-  
խարարական ցանկին մէջ (հարիւր վաթսունի  
վրայ) անոնց ժԱ. թԲ. աստիճանը յատկա-  
ցուած է (Ալիշան, Այրարատ, վեներտիկ  
1890, էջ 195 եւ 430 ու Մեսրոպ Երեցու  
Պատմութիւն Ս. Ներսէսի 1853, էջ 32):

Հետեւաբար Ամատունեաց նախարարու-  
թիւնը բաւական բարձր դիրք ու աստիճան  
ունէր: Գալով Պատմագիրներու յիշատա-  
կութիւններու, է. նախարարն է վաչէ Ամա-  
տունի, որ Ներսէս Պարթեւի կ'ուղեկցի զէպի  
Կեսարիա (Չ. Սովեբք, էջ 25): Դանիէլ Ծե-  
րունիին առաքուած չորս նախարարներու  
վրայ Գ. ն է կարէն Ամատունի (Փ. Բուզանդ,  
Պատմ., վեներտիկ 1933, էջ 49): Իսկ Ներ-  
սէս Պարթեւի ուղեկից ութը նախարարներու  
չարքին մէջ ամէնէն վերջը դրուած է «Պարգեւ  
իշխան տանն Ամատունեաց» (անդ, էջ 81):  
Ղ. Փարպեցիի մօտ Արտաշատի ժողովի մաս-  
նակցող տասնութը նախարարներու ժԱ.  
անդամն է վահան Ամատունի (Պատմ., վե-